

ՎԱՀԱՆ ՄԻՒԱԽՈՐԵԱՆ

ԱՐՅԱԻԻՐՔԻ ՕՐԵՐ

IX

ԳՈՅՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԲԵՐ

Ինչ անցաւ - դարձաւ՝ չգիտեմ, բայց կեսարիա վոխաղըւելուս հարցը մարեց, եւ ես մնացի Գաւախում: Շատ ծանր օրեր էին: Կեանքին բոնութեամբ շղթայւածի եւ խանձւած արտի պէս թափուր հոգեկան մի վիճակ ունէի: Առաջին երկու օրը բան հասկանալու ի վիճակի չէի: Բայց այնուհետեւ էլ ոչինչ չկարողացայ իմանալ վերջին մեծ գաղթի մասին: Գիտէի միայն, որ մեկնելու պահին, Գաւախից քիչ հեռու, արտի մէջ մեռել է մի կին...

Գաւախը այժմ բոլորովին լուռ, միայն երբեմն յայտնում էին ուղտերի եւ սայլերի կարաւաններ, որոնք մի պահ աղմկում էին մեռած փողոցը ու անցնում: Գաղթի թափը կոտրել էր. այժմ տանում էին յետ մնացած խմբեր, որոնք այլեւս չեին շարժում տեղական բնակչութեան հետաքրքրութիւնը: Գիշերներն անդամ փողոցում, սրճարանում կեանք չկար: Մարել էր հետաքրքրութիւնը նաեւ դէպի ինձ. այդ օրերի միակ մխիթարութիւնը: Բժիշկը առաջւայ պէս այցելում էր գիշերները. շատ կամ քիչ միշտ խմած էր լինում. արդէն ուրիշ կերպ էլ դժւար էր պատկերացնել նրան: Հայերի գաղթի, ջարդերի մասին այլեւս նրանից ոչինչ չէր կարելի իմանալ. ոչ մի հարցման չէր պատասխանում: Պարզապէս, կարծես, չէր լսում: Հատ ու կտոր ասածները այժմ դառնում էին «կայսերական բանակի քաջազործութիւնների» շուրջը, որոնք, ի մեծ զարմանս իմ, տեղի էին ունենում Խոփի, Արխաւի, Թորթումի, Ալաշկերտի, Վանի՛ շըրջաններում... Ականջներիս չէի հաւատում, խելքս չէր հասնում: Եւ, սակայն, բժիշկը այդ դէպքերի մասին խօսում էր այնպէս, ինչ պէս եւ բոլոր սովորական բաների մասին: Օրւայ անցուղարձերի մա-

սին իմանում էի իրակլուց : Բայց այդ էլ միտյն այն դէպքում , երբ գալիս էր առաւտաները . մնացած ժամանակները քնատ , անտրամադրեր էր լինում : Փոքր խմբերը ջարդում էին մինչեւ կաւզա , Տէրվենտի կիրճում , կամ վերը՝ լեռնաղաշտին : Զարդարաներին , ամէն մէկ հայր համար , վճարում էին հինգ դրուց : Բայց նրանց էր պատկանում նաև աւարը : Ասածներից երեւում էր , որ անդամ Գաւախիթիւրքերի բութ ջղերը այլեւս անկարող էին դիմանալու այդ դէպքերին , լուրերին : Ասում էր , որ թիւրքերը սաստիկ ընկճած են .

— Ռուսները յաղթում են եւ շուտով պիտի դան , թիւրքերից հայերի մասին հաշիւ պահանջելու : Հիմա ամէն մարդ աշխատում է մի հայ երեխայ ձեռք լերել , որ բարերարի հանդամանքով պատասխանատութիւնից ազատւի . . .

Մի քանի օր անց առիթ ունեցայ համոզւելու , որ իրակլու առածները հիմք ունեն : Կէսօր էր , երբ , յանկարծ , ներս մտաւ հազիւ 14 տարեկան մի կոկիկ , վայելչակաղմ մանչ , որ ինձ կերակուր էր բերել : Նա համարձակ բարեւեց , յուզումից կարմրեց , ասելիքը մոռացաւ ու հազիւ զսպելով իրեն համակած զարթ ուրախութիւնը՝ ասաց , թէ անունը իվան է , ինչ որ ինձ կրկնակի զարմանք պատճառեց : Պարզեց , որ Յովսէփ ծինկէողեանի եղբօրորդին է , Աննիկի եղբայրը , որոնց ճանաչում էի : Յովսէփին , իբրեւ սուսահպատակի , աքսորել են Գաւախի . Իվանը եկել է նրա հետ , իսկ քոյլը մնացել է Սամսոնում , Պալրկծեանների մօտ : Այժմ Յովսէփի կինը , տիկին Քարտինէն արտօնութիւն է ստացել ամէն օր ինձ կերակուր ճամբելու , եւ ահա իվանը բերել է :*)

Իվանից իմացայ , որ Գաւախում դեռ մօտ քսան հայ ընտանիքներ կան , մեծ մասմբ չարշամբացի հարուստներ , որոնք իսլամանաւու , կաշառքի միջոցով աշխատում են մնալ : Սամսոնցիներից , Փատաղի Արմենակի ընտանիքից բացի , դեռ Գաւախ էին նաեւ Մենծիկեանները : Ճինկէողեանները նոր էին եկել . եւ իվանը շատ բան չգիտէր , բայց ոուսների յաղթութեան լուրերը , թիւրքերի ընկած տրամադրութիւնները յայտնի էին նաեւ այդ աչքաբաց մանչուն :

Մի քանի օր յետոյ ինձ այցելութեան եկաւ նաեւ Փաստաջի Արմենակը : Հիւծւած , գեղնած , ահարեկւած տեսք ունէր : Նրանից մի քանի մանրամասնութիւններ իմացայ մեծ զաղթի մասին : Գաւախի

*) Ճինկէողեանները բարուցի էին , իիւր էին եկել ազգականների՝ Հեթիմեանների մօտ , որոնք արդէն գաղթել էին :

տակ մեռնողը Տողրուծ - հանումն էր : Ժանդարմները սայլից հանել, թողել էին արտի մէջ : Ստոյդ էր, որ թիւրքերի մօտ բաւական թուով փոքր երեխաներ էին մնացել . . .

— Հայու երեխայ ունենալը մի մարմաջ է դարձել . ամէն մարդ ուզում է մէկը ունենալ :

— Ի՞նչ լուր կայ պատերազմից :

Արմենակը, յանկարծ, կենդանացաւ, մի ցնցող հայեացք նետեց գէպի գուռաը եւ հազիւ զսպւած դւարթութեամբ շնչաց .

— Գալիս են, եղբայր, գալիս են . . . Հիմա երբեմն գնում եմ սրճարան . երէկ գիշեր Յովսէփի էֆէնդիին էլ տարի, որ վարժւեն . ես սրանց գիտեմ, որքան փախի - փախի անես, այնքան վատ կը լինի . առաջ խէթ - խէթ էին նայում, հիմա տեսնե՞ս . . . առաջին տեղը ինձ են տալիս . հայ, պէոյլէ օրուր, հայ, շէոյլէ օրուր . խեղճացել են, հասկանում են, որ ոռուները գալիս են : Ուսւ զօրքերը հիմա մտել են Ալաշկերտ եւ գնում են Վանի վրա . . .

— Իրե՞նք են ասում :

Արմենակը նորից մռայլեց .

— Ոչ, Վահան Զամշեանը ասաց . բերել էին կառքով, կին էլ հետն էր : Գաւախում երկու ժամ մնաց . իբր թէ, իրեն, իբրեւ ոռւսական հիւապատոսարանի պաշտօնեայի, ապահով պէտք է հասցնէին կեսարիա . . . Երեխայի պէս հաւատում էր, բայց Տէրվէնտի կիրճում սպանել են . . .

Արմենակը ժիլէտի գրպանից մի սակի լիրա հանեց .

— Մի շաբաթ է ինչ ուզում եմ քեզ մօտ գալ, բայց չի յաջող- ւում . Զամշեանը քո մասին հարցուփորձեց եւ խնդրեց որ այս լիրան քեզ տամ . . .

*
**

Ճինկէողեանների շնորհիւ ես սկսեցի արագութեամբ կազդուր- մել : Ծոծրակիս մօտ եղած վէրքը դոցւեց . բուժւեց նաեւ բորբոքւած աչքս : Մնում էր միայն գլխիս խոչոր վէրքը, ուր ոսկորը ջարդւած էր : Բայց գրեթէ անփափոխ դրութեան մէջ էին ոտքերս : Քիչ - շատ կենդանութեան նշաններ էր արտայայտում ձախ ոտքս : Այս վիճա- կում էի, երբ մի օր, յանկարծ, ներս մտաւ մի սպայ եւ քաղցրու- թեամբ հարց տեց .

— Ի՞նչ ունես, օղում . . .

Անակնկալի գալով, ոչինչ չկարողացայ ասել :

— Գլուխդ վիրաւորւա՞ծ է :

— Այո...

— Ո՞ւր ստացար վէրքը...

Պարզ էր, որ մարդը իմ նկատմամբ թիւրիմացութեան մէջ է :

— Անունդ ի՞նչ է...

— Վահան...

— Հա՞յ ես...

— Այո'...

Սաստիկ զարմացաւ, բայց շտկեց ու վրա բերեց .

— Լա՞ւ են նայում քեզ այստեղ :

— Այո'...

— Բժիշկը կանոնաւոր այցելո՞ւմ է :

— Այո' :

— Որ եւ է խնդիր չունե՞ս :

— Ո՛չ :

Ոտերը քովի բերելով շրիւկացրեց, բարեւեց ու գնաց :

Քառորդ ժամ չանցած՝ իրար յետեւից ներս մտան Ալին, Իրակլին եւ Եորիոս էֆէնդին, հիւանդանոցի կառավարիչը, որ նոր էր դարձել Սամսոնից : Վերջինը յուղւած, միեւնոյն հարցումները մի քանի անգամ կրկնեց . Ե՞րբ եկաւ, ի՞նչ ասաց, ես ի՞նչ ասացի, ե՞րբ գնաց . . . Հասկացայ, որ քննիչ էր :

Հիւանդանոցի առանց այն էլ մեռած կեանքը սմքեց : Իրակլին այժմ կասկած չունէր, որ հիւանդանոցը պիտի փակեն եւ իրեն էլ «կուի դաշտ» ճամբելով մի տեղ «շանսատակ» պիտի անեն : Յուսահատութեան մէջ «փախստական դառնալու» հնարաւորութեան մասին մոռացել էր : Ալին էլ մտահոգւած էր եւ այդ օրը բարեհաճ վերաբերմունք արտայատեց գէպի ինձ . մի քանի անգամ դնաց, եկաւ, հարցրեց, թէ ի՞նչ բանի պէտք ունիմ : Կարծես, թէ ես էի քննիչը :

Դիշերը, երբ բժիշկը եկաւ, պէտք զգացի «դէպքի» մասին ասելու : Մշուշապատ աչքերը կիսախոսով լսեց ու ոչ մի հարցում չարաւ : Մի պահ նոյնիսկ ինձ այնպէս թւաց, թէ նստած տեղը քնել է : Բայց ելաւ, յորանջեց, գէմքը շփեց ու գնաց :

Բոլոր նշաններից պարզ էր, որ հիւանդանոցի օրերը հաշւած են : Ի՞նչ պիտի լինէր ինձ հետ այդ գէպում՝ չդիտեմ, բայց, յանկարծ, դրութիւնս փոխւեց . յաջորդ օրը անսպասելի կերպով ներս մտաւ բժիշկը եւ նրա յետեւից Փիր – Աղան : Այն աղօտ հանդիպու-

մից յետոյ, առաջին անդամն էի տեսնում նրան. կարճ վզի վրա սեւ, կլոր գէմքը, ցածր գլխի հետ միասին, կարծես թէ ձուլւած էր պարսկական դատակի հետ: Միջինից քիչ բարձր եւ փարթամ կազմի համեմատութեամբ, տարօրինակ տպաւորութիւն էին թողնում նրա կարճ թեւերը, որոնց շարժելու ժամանակ ճօճում էր լանջը: Շնչառութիւնը անկանոն էր եւ քթով լինելու դէպքում սուլում էր: Բայց Փիր - Աղան սնդիկի պէս շարժուն մի մարդ էր եւ խոշոր հմայիչ աչքեր ունէր, որ չեզոքացնում էին բոլոր մարմնական թերութիւնները: Այսպիսի մտերիմ ընթացք արտայայտեց, որ, կարծես թէ, տարիների բարեկամներ էինք ու երէկ էինք միասին «Քէյֆ» արել:

Կարգադրութիւն էր ստացել ինձ Սամսոն ճամբելու: Հիւպատոսի նամակն ու Սամսոնի իշխանութիւններից ստացւած թոյլութիւնը բերել էր կառապան պարսիկ Հասանը, որ այժմ իր կառքով սպասում էր դուրսը ինձ տանելու համար: Արգէն պարզ էր ինդիրը, բայց Փիր - Աղան ծխախոտ հանեց, լուցկի վառեց եւ սկսեց բացատրել այն դժւարութիւնները, որոնց հանդիպել էր նա ինձ Գաւախում պահելու գործում, մինչեւ որ ահա այս կարգադրութիւնը հասել էր: Աչք մնացել էր Փիր - Աղայի ձեռքին վառող լուցկի վրա, որ խանդարում էր ինձ կեղրոնանալ: Հասաւ մատին. զարմացած ցնցւեց, նետեց ու շարունակեց.

— Հիմա, ոստիկանութեան ճամբւելուդ առթիւ պէտք չէ մտահոգես... Դա մի պարզ ձեւականութիւն է, յարեց նա ծխախոտը մօտեցնելով բժշկի ձեռքին, որ նոր լուցկի էր վառել:

— Այստեղից Հասանը քեզ պէտք է տանի Միրզա - Հիւսէյին Խանի մօտ: Հասանին ճանաչո՞ւմ ես... Մեր Հասանի՞ն... Վա՛յ, ի՞նչ ասեմ քեզ...

Ու զսպանակից նետւածի պէս վեր ցատկեց, որ Հասանին կանչի: Բժիշկը, որ տաղտկութեամբ լսում էր, սկսեց գլխիս կապերը քակել: Փիր - Աղան նորից յայտնեց մի ջլուտ, երիտասարդ պարսիկի հետ, որ գլուխը մէկ կողմ թեքած՝ լսում էր նրան.

— Տեսնո՞ւմ ես զաւալլըն, թոշնի թեւով Սամսոն պիտի հասցնես, գեռ արեւը չնստած այնտեղ պէտք է լինես: Է՛, հաֆիմ, ես հիմա գընամ նամակս գրեմ, մինչեւ որ գու էլ գործդ վերջացնես:

Բժիշկը մաքրեց գլխիս վէրքը, փոխեց վիրակապերը եւ սկսեց ինամքով կարել: Իր ընթացքի մէջ ոչինչ չփոխեց նաեւ այդ վերջին օրը. գաղաղած էր, թոշնած, ինչպէս բոլոր ցերեկները: Ամէն առիթով բարկանում էր իրակլիի եւ Ալի վրա: Վերջապէս — աւարտեց

եւ սկսեց վիրակապերով փաթաթել նաեւ ոտքերս : Իր բոլոր տարօրինակութիւններով, հարազատ մէկն էր բժիշկը, որ վճռական դեր ունեցաւ կեանքիս մէջ : Զգում էր, երեւի, որ պէտք ունեմ երախտագիտութիւնս յայտնելու եւ չէր ուզում առիթ տալ : Երբ սկսեցին ինձ հազյնել, դուրս ելաւ :

Կառքի մօտ կանդնած էր իվանը : Վարը, 10 – 12 քայլի վրա՝ Արմենակը եւ կինը : Աւելի վար՝ Ցովսէկը, Քարտինէն եւ սպիտակ շալով գլուխը ծածկած մի ուրիշ կին : Հիւանդանոցի կառավարիչը, բժիշկը, երկու թիւրքերի հետ միասին, ուրիշ բաների մասին խօսելու ձեւով, նստած էին սրճարանի առջեւ : Քովնտի կանդնած էր ճմլած հաղուստով մի փոլիս : Վերը, փողոցի միւս եղրին, մի խարխլած շէնքի պատշգամբում խմբւած էին հայ կանայք, երեխաններ . չարշամբացիներն էին, որ ժամանակին խանդավառ ընդունելութիւն էին արել ինձ եւ վերի դասարանների աշակերտներիս, երբ յայտնւեցինք իրենց մօտ . . .

Արդէն պատրաստ էինք մեկնելու, բայց Փիր – Աղան «Հասա՞ն», «Հասա՞ն» գոչելով անվերջ պատէրներ էր տալիս : Աչքս մնացել էր բժշկին : Մօտեցաւ ու չոր ու ցամաք մի բարիերթ մաղթեց : Փիր – Աղան ձեռքերը երկարեց դէպի հասանը, կարեւոր մի բան յիշողի պէս, բայց ձիերը վաղեցին . . .



Կառքը սլանում էր նոյն վերելքով, որով երկու ամիս առաջ բոլորի հետ միասին ես էլ սահեցի վար : Այնքա՞ն մարդ ընդունած եւ դէպի մահ ճամբած այս փոքրիկ քաղաքը այժմ գերեզմանի պէս լուս էր : Միայն տեղ տեղ թիւրք երեխաններ, թանձը փոշու մէջ վաղելով, փորձում էին հասնել, կառքի յետեւին կառչել : Քաղաքի ծայրին, ծառերի տակ, մի խումբ քաղաքացի հայեր տեսայ : Թւաց, թէ մէջնը ծանօթներ կայի՞ն, բայց գնո՞ւմ էին, եկե՞լ էին, թէ պիտի գնայի՞ն՝ չիմացայ . . .

Մահում էինք վար : Կարծես վերազառում էի մի շատ հեռու երկրից եւ մտքերս, կեանքի բոլոր տպաւորութիւններս մնացել էին այսուղ : Իշնում էինք օձապտոյտ մի ճանապարհով : Արեւը ցատկեռում էր աջ ու ձախ : Մարի լանջն ի վեր, մի ուղղութեամբ անօգնական պառկել էին կանաչներ . կարծես թէ նոր էին գլուխ բարձրացնում անցած կրունկների տակից : Ճամբուն զուզահեռ, կիսադալար կանաչների մէջ, երկարում էին նոր բացւած արահետներ : Եւ ամէն

մի թեքում, աննշան վերելք ու վայրէջք, ամէն ծառախումբ մի պատմութիւն ունէր, կարծես: Անդարձ անցած մի ճանապարհ էր այդ, ուրով միայն ես էի վերադառնում . . .

Հասանք Զախարլի: Այստեղ պատերի տակ կկզած էին սակաւաթիւ տարագիր գիւղացիներ: Հիւանդներ կամ գաղթից յետ մնացածներ: Երեւի կարծում էին, թէ իրենց բախտը տնօրինող կարեւոր պաշտօնեայ էր անցնում. կառքը տեսնելով՝ նրանք պատն ի վեր երկարում էին, խոնարհութեամբ ճեռքերը դարսում կրծքներին, մինչեւ որ անցնում էինք . . .

Ահա եւ քարւանսարան, ուր վերջին օրերը մնացինք. ի՞նչ տարօրինակ բան է մարդու ճակատագիրը, Տէր Աստւած . . . Ահա ցածր ու տարածուն կամուրջը, որից ուղեցի վար նետել ինձ . . . Ահա եւ վերջին խարխլած քարւանսարան, որտեղից փախայ ամասիացի խենթի պատճառով: Լայն խճուղու եղրերին դեռ մնում էին անձրեւից, արեւից դեղնած թղթի կտորներ, պահածոների ծալծւած տուփեր, բգկաւած լաթերի քուրջեր, ջարգւած շիշերի փշքանքներ . . .

— Ռիզա', Ռիզա', կանչում է Հասանը՝ ձիերը քարւանսարայի առաջ սանձելով:

Ո՛վ որ է այդ Ռիզան, համբ լսութեան մէջ չի լսում.

— Օլան հե՛յ, Ռիզա' . . .

Պատշգամբում յայտնեց մի հսկայ արեւահար մարդ. քնահարամ տհաճութեամբ նայեց, ապա, յանկարծ, գզրգոցով վար իջաւ ու դարպասը բացեց: — Մարիապարա՛, հոգա էֆենդի, գոչեց այնպիսի մի ճաթուած ճայնով, որ երբեք չի կարելի մոռանալ:

Պարսիկ էր ու, կերեւի թէ, իմ մասին գիտէր: Զիերը պէտք է շունչ առնէին այնտեղ: Ռիզան, թիւրքերին նզովելով՝ ինչ որ բաներ է առում, որից հասկանում եմ միայն, որ հիմա էլ Սամսոնի հայ վաճառականների ապրանքներն են տեղափոխում: Խօսքի տակն ու վրան յիշում է իբրանոսեանի անունը: Իրը թէ, միայն նրա կերպասեղէններով բարձւած 40 սայլ է անցել:

Զիերի սանձերը թուլացրին, կերի պարկեր կախեցին ու վեր ելան: Քարւանսարան պարապ էր: Աջ կողմը, անկիւնում, հաւաքւած էր թղթերի, ջարգւած պնակների, անպէտք իրերի եւ աղբի մի կոյտ: Դիմացը, սիւնից – սիւն կապւած դեռ մնացել էր ծծկերների ճօճկի զուղահեռ պարանը: Դրան մօտ մի մեծ քար կար, որ ինքն իրեն յըդկւել էր: Այն ժամանակ ամասիացի խենթը այդտեղ նստած «երգում» էր: Ահաւոր իրողութիւնից կարկամած բազմալեզու մի շունչ կար չորս կողմս . . .

Արիզան մի փոքրիկ, կլոր բաժակով թէյ ու մի թղթի վրա հաց ու պանիր բերեց: Տեսրից փրցւած մի թերթ էր, որի վրա սկսնակ ձեռքով գրւած էր՝ $1+1=2$, $1+2=3$, $1+3=4$, $1+4=5$, $1+5=5 \dots$

**

Արեւը քերում էր երկնքից կախ ընկած խճճահեր ամպերի եղբերը, երբ մեկնեցինք Զախալիից: Լուս, թմրած ու նիրհած, հարթ ճամբու վրա երբեմն ցցւում են փիբուն բլուրներ, որոնք աւելի շուտ նման են աւազակոյտերի: Կառքի արագ ընթացքից ճամբու եղբերը, պարանի պէս պրկւած, փախչում են յետ: Եւ չորացած ու կոչտացած խճուղին դղրդում է անիւների տակ: Հասանը քթի տակ թրքական ինչ որ շարկի է երդում: Բայց խուլ ծափերի պէս իրար յաջորդող ձիերի սմբակների տարափի տակ, հասնում են ականջներիս միայն «ա՛, ա՛, ա՛ … օ՛, օ՛, օ՛ …» բացականչութիւններ: Վարը, բլրակների մէջ ճանապարհը նեղուում է եւ դղրդոցը հասնում ականջներիս, կարծես խողովակի միջից: Յիշում եմ, որ այստեղ էր կոտակւած չարչամբացիների մեծ զաղթը…

Սևելի վար, ճանապարհը բանած էր լքած գիւղերից քշւող անհաշիւ անասուններով: Մեծ քոչ է կարծես. անասելի փոշին, փոշտոցը ըսնել է չորս կողմը: Կառքը ընթացքը դանդաղեցրեց. մի քանի յընցոտիպատ թիւրքեր, իարազանները ճօճելով, հարայ – հրցով ճամբայ են բաց անում: Կով, հորթ, եղ, գոմէչ, կարծես, տիեզերական պատուհասից ահարեկւած, գունչերը խուճապահար պարզում են իրար զիստերին, գուրս լինինում ճանապարհից ապա, յանկարծ, ապահով զգալով իրանց՝ ծուլօրէն դարձնում են գլուխները ու անտարբերութեամբ նայում: Էլ աւելի վար զալիս էին ձիու սայլեր: Հասանը քաշւեց, կանգ առաւ ճամբու եղբին, որ անցնին: 30 – 40 միաձի սայլեր էին, որոնք Սամսոնից Զախալի տարան մեզ: Այժմ նրանք անխնայ բարձւած են ապրանքներով: կերպասեղէն, խալիներ, քիլմներ, պարկերի մէջ հաւաքւած պղնձեղէն, մեծ ու փոքր արկղներ դարսւած, կապիպատ էին նրանց մէջ: Բեռան տակ սայլերը ճուճուում էին: Քրտնաթոր կառապանները այժմ քայլում են՝ մտրակելով ձիերը, որոնք լարել են իրենց վերջին ուժերը: Նրանց վզերի երակները ցցւել են: Ոմանք քովնտի կախել են լեզուները: Աչքերի մէջ պաղել է բեռը քաշելու անասնական յամառութիւն…

Հեռուից բացւում, պահւում էր ծովը: Մեւ թաւշի պէս հարթ ու անծայր տարածութեան մէջ երկարել էր լեզուն Զալթի – պուրունը:

Ու տեսայ մի տան կղմինարէ կտուրը, ապա մի ուրիշը, երրորդը, չորրորդը... Սամսոնն էր: Ծայրամասի անդորրութիւնը խանգարելով առաջ անցանք: Իրինամուտի պարզ օդի մէջ ամէն մի շէնք ցըցւել է իրեն յատուկ ձեւով: Նոյն քաղաքն է: Ճանապարհից դէպի աջ, դէպի ծովեղերք բարակ շերտերով տարածւում են մարդագետիններ, որոնց մէջ տեղ - տեղ տարբերում են բանջարանոցներ, ծխախոտի ցանքսեր: Հեռուում կանանչները կորչում են Զալթի - պուրունի թիկունքում: Ճամբի ճախ կողմի խորտուբորդութիւններում թափած են ամէն մի թրքական քաղաքի արևարձաններին յատուկ աղբակոյտեր: Անցանք յունական յետ ընկած թաղամասերով: Այստեղ, այնտեղ պատահում են կանայք, երեխաներ, որ մայթերի վրա, տների մօտ, գլխիկոր կանգնած՝ նայում են: Կարծես, թէ արու բնակչութիւն չկայ... Բայց ահա եւ քաղաքի գլխաւոր փողոցը, մարդեկ, անցուղարձ, պարապ - սարապ գիտողներ — ամէն բան այնպէս, ինչպէս միշտ:

Հասանը ծուեց դէպի աջ, մայթին կից կանդ առաւ, վար իջաւ ու անցաւ ձիերի առջեւ: Դիմացից շարժւում էր մի բաղմամարդ թափօր: Մոլլաներ, փաթթուցաւոր քաղաքացիներ, ոստիկաններ, զինւորականներ ուղեկցում էին ուսերի վրա բարձւած մի դադաղ... Անցան: Հասանը նորից իր տեղը անցնելով՝ շշնջաց.

— Նուրի - բէյին տարան...

Ապշահա՞ր եղայ. այդ անունը արդէն իսկ գամի պէս ցցւած էր գլխիս մէջ.

— Ո՞ր Նուրի - բէյը...

— Գաղտնի ոստիկանութեան պետը:

— Մեռա՞ւ...

Հասանը չպատասխանեց:

Աննախընթաց այս զուգաղիպութիւնը ա'յնպէս շշմեցրեց, որ հաղիւ գտայ ինձ, երբ, յանկարծ, տեսայ կենտրոնական բանտի նարնջագոյն պատերը. նշանակում է քիչ վարը կառավարատունն է, ուր եւ տանում էր ինձ Հասանը: Երկաթածող բարձր դռներից կառքը ներս անցաւ: Բակում ոչ ոք չկար: Արդէն առաջ էլ հազիւ կարելի էր մարդ տեսնել այս հսկայ բակում: Հասանը իջաւ եւ ուղղւեց դէպի ոստիկանական բաժինը, որի մուտքը փողոցից էր: Արեւի ցոլքերը գեռ խաղում էին կառավարատան երկրորդ յարկի պատշդամբի կամարներին: Այստեղ ես եղել էի մէկից աւելի անդամներ, մութեսարիք. Նէջմի - բէյի հրաւէրով: Այժմ գլխիս մէջ ժխոր էր տիրում, երբ, յանկարծ, յայտնւեց Բահար - աղան, պարսկական հիւպատո-

սարանի կաւազը։ Նրա դէմքը ակնթարթի մէջ մի քանի արտայայտութիւն փոխեց։

— Ալլահի այս դիմսիզների տները գլուխներին փլցնի, ասաց նա դառնութեամբ։ Բայց մի՛ մտածիր, լաւ կը լինի, այստեղից քեզ պիտի տանիմ։ Տեսա՞ր, թէ ինչպէս նուրի - բէյը արժանի պատիժը ստացաւ... Սեւֆիաքի ժամանակ հայերից տիֆով վարակւեց, երեք շաբաթ շարունակ զառանցեց, թէ «Հայերը ինձ խեղդում են» ու հոգին աւանդեց զհանդամի թագաւոր իրլիսին...»

Բահարը բարձրահասակ, ոսկրոտ, վաթսունը անց, բայց գեռ ամուր մի պարսիկ էր։ Ամէն նովրուզ բայրամին նոէր էր ստանում ինձանից եւ որովհետեւ զրամի մոլի էր, շատ լաւ բարեկամներ էինք։ Բնախօսական ատելութիւն ունէր դէպի թիւրքերը, որ ծնունդ էր առել դաւանական հիմքերով ու բարդացել անձնական մի տխուր պատմութեան հետեւանքով։ տարիներ առաջ նրա կինը փախցրել էր մի թիւրք եւ ինքը մնացել էր «չոր գլուխ»։ Պատերազմի նախօրեակին, իր մոլի ոռուսասիրութեամբ, փաստաջի Արմենակի հետ միասին, «մի հողի, մի մարմին» էր կազմում։ Ու այժմ էլ կարծես ոչինչ չէր փոխւել. նա շրջեցայլը, բակի չորս կողմին խուզարկու հայեացքներ նետեց ու սաթի պէս սեւ ներկած թաւ բեխը ափի մէջ առնեռով շշնջաց։

— Գալի՛ս են, հոջա էքնդի, հէ՛չ հոդ մի անի, ոռուսները գտվու են, մանէթի գինը բարձրացել է...»

Այդ պահին ամենից շատ կարեւոր էր իմանալ, թէ ինչ պէտք է լինէր իմ վիճակը։ Բայց Բահարը այդ չգիտէր. ասածներից միայն պարզեց, որ նուրի - բէյին ժամանակաւորապէս փոխարինում է Սարրի - բէյը, որը այժմ բացակայ է. նա խոստացել է ազատ թողնել ինձ, հիւպատոսի երաշխաւորութեան տակ։ Բայց պէտք է նախազէս ներկայանայի նրան։

Կէս ժամ չանցած Սարրի բէյը եկաւ, եւ Հասանը ինձ շալակն առած, մի փոլիսի առաջնորդութեամբ ներս տարաւ ոստիկանատան սենեակներց մէկը ու Սարրի բէյի դիմաց վար զրեց մի բաղկաթուի մէջ։ Քառասունի մօտ բարձրամարմին այս մարդը գեղեցիկ արտաքինի տակ չարութեամբ անկուչտ մի հոգի ունէր թաղնւած։ Դէպէքից առաջ կարող ու իրազեկ պաշտօնեայ էր համարւում եւ, իրը թէ, նոյնպէս բարեկամ էր հայերին։ Իրականի մէջ տեղահանութեան բովանդակ զաժանութիւնը սրա ջանքերի արդիւնքն էր։ Սա էր, որ ինձ ձերբակալեց։ Այժմ թէ՛ Փիղիքական, թէ՛ հոգեկան վիճակս այնպէս էր, որ կորցնելու ոչինչ չունէր այլեւս, ինչ որ, երեւի, զգում էր եւ ինքը։ Նա տարակուսանքով զննեց ինձ. կարծես, ուզում էր հասկանալ, թէ որքան իրողութիւն է վիճակ։ Հայեացքս մնացել էր

«Միորջի» Սուլթան Մէմմէզը Եւի ուռած, հաւկթաձեւ դէմքին, որի մեծաղիր մի նկարը կախւած էր դէմուղէմ :

Վերջապէս, ծխախոտ վառելով ասաց .

— Հիմա ձեղ, այս վիճակում, երկար պահելու միտք չունիմ : Բայց մի հարց պէտք է պարզեմ . այդ կարող է օգտակար լինել ձեղ համար : Ի՞նչ կարգ եւ աստիճան ունէիք ոռւս բանակի մէջ...

Արդէն գիտէի, որ ամենաարտառոց բաների կարելի է հանդիպել թիւրք ոստիկանատան մէջ : Բայց այդ հարցումը այսպիսի մի անակնկալ էր, որ անկեղծօրէն զարմացայ :

— Դուք մեր հիւրն էք եւ իրաւունք ունեմ ձեղանից ճիշտ պատասխան սպասելու, յարեց նա խօսքերին մտերիմ հանդամանք տալով :

— Ո՞չ մի զինւորական կարգ կամ աստիճան չեմ ունեցել ես :

— Ե՞րբ էք ենթարկել զինւորակոչութեան եւ ո՞րտեղ :

— Ո՞չ մի զինւորական ծառայութիւն չեմ արել ես :

— Այն գէտքում դուցէ ասէք, թէ ո՞ւր էք ստացել ձեր զինւորական կրթութիւնը :

— Ո՞չ մի զինւորական կրթութիւն չունեմ ես...

Յետ նստեց ու մատիտը ձեռքի մէջ դարձնելով՝ ասաց .

— Ռուս զօրքի մէջ հաստատւած եւ այստեղ կատարւած շարքային եւ այլ մարզանքի փորձերիդ մասին մանրամասն տեղեկութիւններ կան . ո՞րտեղից գիտէք այդ :

— Ռուսական զպրոցում պարտազիր զաս էր :

— Ռուբեմն, սովորել էք Ռուսաստանում :

— Այո՛ :

— Ի՞նչ դպրոց էր այդ :

— Քաղաքային վեցդասեան սովորական զպրոց ...

Բոնարբոսիկ մի զարմանք ձեւաւորւեց նրա դէմքին .

— Միթէ՞ հայերը կարող են այդ կարդի սուսական զպրոցներում սովորել :

— Այո՛ :

Բոլո՞ր հայերը ...

— Լաւ չեմ հասկանում ձեղ :

— Այսպէս, օրինակ, մեր երկիրի հայը կարո՞ղ է այդ կարգի դրակրոցում ընդունել :

— Այո՛ ...

Սարբի բէյը լոեց ու սկսեց երկարօրէն ծխախոտը հանդցնել : Իմ մէջ կասկած ծագեց, որ նրան զբաղեցնող բուն խնդիրը հպատակութեան հարցն է :

- Դպրոցը աւարտելուց յետոյ ի՞նչ պաշտօններ էք վարել :
- Առիթ չեղաւ, պէտք է կրթութիւնս շարունակէի :
- Միթէ՛ բոլոր ժամանակ ուսանում էիք, ասաց նա հեղնանքի ակնյայտ շեշտով :
- Ո՞չ, յետոյ ձերբակալեցին :
- Ի՞նչ էք ասում . . .
- Հայեցքս նետեցի Սուլթան Մեմմէդի վրա, որի գէմքը աչքիս առաջ քանի գնում փետում էր :
- Եւ ի՞նչ յանցանքով ձերբակալեցին :
- Իբրեւ յեղափոխականի :
- Նա առաջ նատեց, դլուխը կախեց.
- Հետաքրքիր է : Ի՞նչ պատիժ կրեցիք :
- Երեք տարւայ նախնական բանտարկութիւնից յետոյ դատապարտեցին յաւիտենական աքսորի Սիրիր :
- Եւ աքսորեցի՞ն :
- Այո՛ :
- Ե՞րբ էր այդ :
- 1910 թւի Դեկտեմբերին :
- Ասացէք ինդրեմ, ո՞րտեղացի էք, հարց տւեց նա յանկարծ, վեր առնելով դլուխը :
- Պարսկաստանցի :
- Ո՞ւր էք ծնւել :
- Թաւրիզին ենթակայ Կարաջատաղի շրջանի Ահեր դիւզում :
- Ի՞նչ է հօրդ անունը :
- Ղահրաման :
- Մօ՞րդ :
- Նատալիա :
- Ո՞ւր են հիմա :
- Հայրս մեռել է, մայրս գտնեում է Կովկասում :
- Ո՞ւր մեռաւ հայրդ :
- Կովկասում :
- Ո՞րտեղացի էր :
- Պարսկաստանցի :
- Աչքերը կարճատեսի պէս վրաս կծկեց.
- Այդ ի՞նչպէս եղաւ, որ ձեզ իբրեւ պարսկահպատակի այնուամենանիւ աքսորեցին Սիրիր :
- Թուսաստանում օտարահպատակները առանձնաշնորհումներ չունեն . . .
- Շուրթը խածեց ու, յանկարծ.

— Ե՞րբ եկաք Թիւրքիա :

— 1911 թւի Յունիսին :

— Ի՞նչ անցագլուկ :

— Պարսկական :

— Ի՞նչպէս ձեռք ձգեցիք այդ թուղթը . . .

— Ամէն մարդ կարող է իր պետութեան անցագիրը ունենալ :

— Ո՞ւր ստացաք անցագիրը :

— Բագւում :

— Այդ ի՞նչպէս եղաւ, որ 1910 թւի Դեկտեմբերին յաւիտենապէս աքսորւեցիք Սիրիս, իսկ յաջորդ տարւայ սկզբին Բագւում անցագիր ստացաք, վրա բերեց նա տաքացած :

— Սիրիս հասնելուց քիչ յետոյ փախայ եւ եկայ Բագու :

Սարրի բէյի մէջ կարծէս մի բան փլաւ .

— Հը' . . .

Ու նորից յետ նստեց .

— Միթէ՛ Բագւի պարսկական հիւպատոսը անցագիր է տալիս փախստականներին, ասաց նա ձայնը իջեցնելով եւ խօսքերին դադանիքի հանգամանք տալով :

— Ի հարկէ, ո՞չ : Բայց հնի հմքով նորը տալու պարտաւոր է . միւս կողմից, իմ հարազատներն եւ պէտք չունէին ասելու, թէ անցագիրը փախստականի համար է :

— Ե՞րբ փախաք Սիրիրից :

— 1911 թւի Մայիս 1-ի գիշերը :

— Ո՞րքան մնացիք Բագւում :

— Հաղիւ երկու շաբաթ :

— Յետոյ ո՞ւր գնացիք :

— Արդէն ասացի, Թիւրքիա :

— Թիւրքիան շատ մեծ է . . .

— Բայազետ :

— Ի՞նչ էիք անում այնտեղ :

— Առեւտուր :

— Ի՞նչ առեւտուր :

— Նաւթի եւ շաքարի :

— Նաւթի եւ շաքարի' . . .

— Այո՛ :

— Որքա՞ն մնացիք Բայազետ :

— Մի տարի :

— Հայ յեղափոխականներից ովքե՞ր կային այնտեղ . . .

— Զեմ յիշում :

— Միտարի մնացել էք այնտեղ եւ ոչ ոքի չէ՞ք յիշում... Մտածեցէք եւ կը տեսնէք, որ յիշում էք, ասաց նա թունալից հեղնանքով:

— Մտածելու բան չկայ, կարող եմ տասնեակ անուններ յիշել, որոնք, եթեսի, արդէն մեռած են, ի՞նչ արժէք ունի որ...

Սարրիի գէմքը սրւեց. հաստ վիզը, գիրուկ լանջին փլած, կարմրեց. առաջ նստելով գլուխը յենեց ձեռքին.

— Ես պիտի խնդրեմ, որ հարցմանս պատասխանէք:

— Ստեղծւած պայմաններում այդ կարգի հարցումներին պատասխանելու միտք չունեմ:

Նա մի պահ շեշտակի նայեց, ապա մեղմ ու սպառնալիքի շեշտով ինքն իրեն չչնջաց.

— Լաւ... շա՛տ լաւ:

Նորից յետ նստեց, փքւեց.

— Բայազետից ո՞ւր գնացիք:

— Պոլիս:

— Ի՞նչ էիք անում այնտեղ:

— Անգործ էի:

— Ո՞քան մնացիք:

— Երկու - երեք ամիս:

— Իսկ յետո՞յ:

— Եկայ Սամսոն:

— Ե՞րբ էր այդ:

— 1912 թւի Սեպտեմբերի վերջերին:

— Զէ՞ք կարող ասել, թէ ինչ նպատակներով եկաք թիւրքիա, ասաց նա նորից ծխախոս վառելով:

— Այն ժամանակ թիւրքիան մեղ համար ազատ երկիր էր եւ Սիրից փախչելով, իր թէ, ապաստանեցի այստեղ...

Թափը ընկաւ. գրում էր, նշանակում էր, թէ խզրդում էր առջեւը ընկած թղթի վրա՝ չղիտեմ: Այդ պահին, յանկարծ, հարեւան սենեակից ներս մտաւ մի նիհար, չնչահատ ու քրտնաթոր ակնոցաւոր պաշտօնեայ, որ «անութերտարի» նման էր: Հազիւ հարցական հայեցք նետեց Սարրի թէյի վրա եւ յաջողեցաւ բարեւել, երբ վերը ձեռքով մի ջղայնոտ շարժում արաւ, որ զնայ:

— Սամսոնում եղած ժամանակ որ եւ է տեղ համբորդե՞լ էք:

— Այո՛, Կիբասոն, Տրապիդոն...

— Իսկ էրզրո՞ւմ...

, Նոյնպէս...

— Ի՞նչ էիք անում այնտեղ...

Գլուկի, որ այդ ձամբորդութեան նալատակը հաստատապէս Սամսոնի ոստիկանութեան յայտնի է.

— Գնացել էի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին, որ գումարւել էր Երզրում:

Ժողովն աչքերով մի պահ լուս նայեց, ապա, յանկարծ՝

— Ուրեմն, ընդունում էք, որ այդ ժողովին մասնակցել էք:

— Ինչո՞ւ պիտի ժխտեմ, երբ այդ ժողովը գումարւեց այստեղ՝ Նորին Վասեմութիւն Թալաաթ վաշայի հրաւերով:

Սարրիի հայեացքը մէկ կողմը սահեց.

— Զէ՞ք կարող ասել, թէ ինչ որոշեցիք այնտեղ:

— Ինչու չէ. որոշեցինք ամէն կերպ խթանել օսմանեան հայերի քաղաքացիական պարտականութիւնների կատարման ընդհանրապէս եւ յատկապէս պատերազմի տեւողութեան շրջանում:

— Ի՞նչպէս էք հաշտեցնում այդ որոշումը ամէն տեղ կատարւած դաւադրութիւնների հետ, ասաց նա զրոյցի բնոյթ տալով հարցաքննութեան:

— Թէ ուր ինչ է կատարել՝ չղիտեմ. որքան ինդիրը վերաբերում է Սամսոնին, այդ որոշման ողևով կատարւած աշխատանքները երեւի արդէն յայտնի են ձեզ...

Սարրին մի պահ ցըւած նայեց ու ելաւ.

— Այո՛, յայտնի են. այդ մասին զեռ առիթ կունենանք խօսելու...

Հազիւ մտաւ հարեւան սենեակը, երբ նորից յայտնեց ակնոցաւոր պաշտօնեան: Նա աթոռը քաշեց եւ այնքան մօտ նստեց, որ կարծես «մեղքերի թողութիւն» պիտի չորհէք ինձ: Ողջ էութիւնից «պաշտօն» էր բուրում եւ, եթէ կարելի է այսպէս ասել, «պաշտօնիստ» էր պարզապէս: Ոտքը ծնկին նետելով՝ թուղթը առաւ ափի մէջ եւ սկսեց փափառքով հարցուփորձել նորից անուն, ծննդավայրը, հպատակութիւն եւ այլն, ու միաժամանակ զբել: Այս մարդը բնաւ ինձ չնայեց. նրան հետաքրքրում էր գրելը: Երբեմն ընդհատում էր հարցումները, ակնոցները շտկելով աչքէ անցնում զրածները ու ապա թափ ստանալով՝ զրում: Շատ երկար տեւեց այդ. վերջապէս, աւարտեց ու զնաց: Մի քանի վայրկեան յետոյ, մի փոլիսի հետ ներս մըտան Բահար – Աղան եւ Հասանը ու ինձ դուրս տանելով՝ զրին կառքի մէջ:

Գլուխս ցաւում էր, պաղ քրտինքը ծորում էր կապերի տակից...

*
**

Կառքը զնում էր վար, զէսլի չուկայ, աւելի ու աւելի զանգաղելով

ընթացքը։ Խիստ տարօրինակ իրարանցում կար վարը։ Երբեք այդպիսի բաղմութիւն չէի տեսել հրապարակում։ Շուկան ընդարձակւել էր և «ախշամ բազարի» եռուզեռը արտակարգ էր։ Ընդարձակ տարածութեան մէջ մնացել էր մի նեղ չերտ, անցուդարձի համար։ Մընացածը բռնւած էր անհաշիւ իրերով, կերպասեղէնով, ամանեղէնով, լեցուն պարկերով, կարասիներով, կանաչեղէններով, մրգերով։ Վաճառողների կանչերն ու ըջապատող ամբոխի խրլոցը բըսնել էին հրապարակը։ Տարակոյս չկար, որ հայ վաճառականների ապրանքներով էր այդ եռուզեռը սկսել։ Բայց ո՞վ էր ծախում, ի՞նչ հիմքերով՝ չգիտեմ։ Կարծես մի մեծ տօնավաճառ էր…… Հասանը մի տեղ իրար վրա ճայն տեց։

— Վարդա՛…… Վարդա՛……

Մի ջրավաճառ, պղնձէ սափորը ճամբու մէջտեղը վար դրած, ափի մէջ համբում էր միւս ձեռքում կծկած դրամները։ Կառքը կանդ առաւ։

— Հավարդա՛……

Դրամները նետեց վզից կախւած պարկի մէջ, սափորն առաւ ու փախաւ……

Աւելի վար ազմուկը քիչ – քիչ նւազելով, յանկարծ, մարեց…… Մարդիկ արձանացած բերանաբաց լսում էին մունետիկի զիլ կանչը.

— «Պէյի՛ւն, ըլխտըմ նիվարինուէ՛, պիր էօֆի՛ւզ կայպալմըշտըր…… Հէր կէօրանէ՛, հախուտ եէրինի պիլէնէ՛, թինա օլունուր մաալիմատ էր սին պէկէտիէ տայրէսինէ՛…… Խապէր վէրէնէ պի՛ր մէջիտիէ պակշիշ վէրինէնէկի…… Հէյ ահալը՛, էշլոտիկ, էշլումէտիկ տէմէյինի՛ս……» :

Ու, յանկարծ, առջեւս ցցւեց քաղաքապետարանի վիթխարի չէնքը, ուր երկու ամիս առաջ գեռ չնչում էր թաղի արու բնակչութիւնը……

Անցանք այդ մոայլ չէնքի թիկունքի փողոցը։ Անհաշիւ խուլ ձայների միջից զեռ հասնում էին ականջներիս՝ «պէյի՛ւն, ըլխտըմ նիվարինուէ՛……»։ Ու այլեւս ճայն չկայ, մարդ չկայ։ Անկերպարան չէնքերով սեղմւած նեղ փողոցը թողնում է ներքնուղու տպաւորութիւն։ Կառքի ոլլոցոցը զարնեւելով պատերին՝ ճարճատում է փողոցում։ Ու ծակոտիկ փեղկերով վերէն – վար ծածկւած պատուհանների տակ երեւում են ստեղներ……

Վարը, երկյարկանի մի պարզ չէնքի առաջ, կանզնած է մի մարդ, ձեռնափայտը հրացանի պէս ճախ ուսին բռնած, ու մի մանչ։ Միրզա – Հիւսէյին Խանն է։ Նա մօտենում, թօթւումէ ձեռքս, բայց ոչինչ չասելով՝ նորից գնում, կանզնում է նախկին տեղը, ապա, ինչ որ մտա-

ծելով, այստեղից էլ գառնալով, մտնում է ներս։ Մանչը մատը բերանում նայում է ինձ։ Մուտքի դէմուզէմ, փոքրիկ, քառակուսի միջնացքի դրան տակ կանայք կան։ Այստեղից դուրս ընկաւ մի սիրուն, բայց չի աչքերով աղջնակ։ Շէնքի այս մասին ծանօթ էի. միջնացքի աջ կողմին Բահարի սենեակն էր, ձախին՝ հիւզատոսի զրասենեակը։ Այստեղ էլ վար դրին ինձ։

Պղնձագոյն դէմքի վրա քիչ թէք ընկած ձւածեւ աչքերը վրաս յասած՝ հիւզատոսը նայում էր։ Շատ յողնած էի եւ ինչ ասելս չը կիտէի։

— Մի քիչ հանգստացիր ու քանի դեռ ուշ չէ, քեզ պիտի ճամբեմ Պալլկձեանների մօտ, ասաց նա։ Նրանք յարմարութիւններ ունեն, արգէն այլպէս էլ պայմանաւորեւել ենք։ Միայն կարծում էի, թէ աւելի շուտ կը հասնիս։

— Մօտ երկու ժամ է ինչ կառավարատունն էինք, ճանձրոյթով ասաց Բահարը։

Ու ոլէաք եղաւ, որ մանրամասն պատմեմ Սարրի բէյի հարցաքնութիւնը։ Միրզա - Հիւսէյին Խանը, որ աչքի մէկը քիչ փոքրացրած ու չըթերի անկիւնում հաղիւ նշմարելի մի ժպիտ պահած ու շաղիւ լսում էր, ասաց։

— Ոչի՞նչ, նշանակութիւն չունի, Սարրի բէյը այնքան խելք չունի, որ շատ վիստակար լինի։ Հիմա ոլէաք է քեզ հանդիսատ ու ապահով զգաս։ Եէջմի բէյը խօսք է տեել քեզ իմ խնամքի ու պատասխանաւութեան տակ թողնել, մինեւ որ բժշկւիս, իսկ այնուհետեւ էլ կը տեսնենք։

Քիչ յետոյ ինձ նորից կառք դրին ու շարժւեցինք։ Ամրան դանդաղ մթնչաղը յողնած աչքերի ոլէս թարթում էր։ Ու թիկունքից լըսում էի։

— Ալլահ Էֆակ՛ր...

Քաղաքամիջի ջամից ալիք - ալիք տարածւում էր Շամ նամազի հրաւէը։ Օրը մօտենում էր վախճանին, հետը տանելով իր բաժին կեանքը։ Փողոցն ամայի էր։ Մի քանի քայլ ասջեւ, հրամանատարի ոլէս, կառքն առաջնորդում է Բահարը։ Եթէ ուղիղ գնաց, փաստաջի Արմենակի խանութիւնից կարող ենք վեր բարձրանալ եւ հասնել «վարի» Պալլկձեանների բնակարանին։ Բայց Բահարը, որին ամէն բան յայտնի է, ծոռւմ է զէողի ձախ եւ կառքն էլ հետեւում է նրան։ Անբանուկ, զարառողի այս փողոցը, հայ - թիւրք բնակչութեան մի չերտով, նոյնպէս տանում էր զէողի հայկական թաղ։ Միայն թէ այս ճամբով «վերի» Պալլկձեանների մօտ պիտի դուրս դայինք։

Սկսում է թաղը։ Զարմանալի խաղաղութիւն է տիրում ամէն տեղ։ Ներկան ու անցեալը իրար խառնւած՝ գլխիս մէջ ստեղծում են մի քառ։ Երկիւղած մի զդացումով նայում ու տեսնում եմ, որ թոփալ - Համբարի պատուհանի վարադոյրը շարժում է։ Ապա, աջ կողմից, Մուղալեանների պատուհանի վարագոյրը կիսով չափ բացում է ու տեսնում եմ դուրս ընկած մի դլուխ... Յանկարծ, յիշում եմ դոկտոր Ստեփին, որ այս կողմերն էր ապրում։ Ու դերեղմանային լսութեան մէջ ձիւրի սմբակների թնդիւնը վախ է ազդում ինձ։ Երադի պէս տեսնում եմ աղջկանց վարժարանը. կոկիկ, քառակուսի բակը, քարէ կարճ պատին համաշափ ցցւած երկաթաձող շրջափակը, համանման կանաչաններկ դուռը... փակ է եւ շշուկ անդամ չկայ։ Կառքը կանդ առաւ. երկու քայլ վեր ապրում են Պալըկծեանները։ Անասելի տմբամբոցով Բահար աղան զարնում է փողոցի դռնից կախ ընկած մուրճը։ Ննջարանում վեցհարւածեան պարտելու պէս մի բան է... Բահարը կրկնում է հարւածները ու դլուխը թեք կախած՝ սպասում արդիւնքին...

Ո՛չ, ձայն չկայ։ Այն ժամանակ նա խուլ կերպով վեր, վար է անում մուրճը, ապա զարկ առ զարկ ուժեղացնում հարւածները... Նայում է ինձ. այսինքն, թէ հիմա անպատճառ ոլիտի գան։ Բայց ձայն չկար։ Յանկարծ, յիշեցի, որ «վերի» եւ «վարի» տների բակերը իրար հետ մի նեղ անցքով կապ ունեն եւ ուղում էի բացատրել Բահարին, որ գուցէ բոլորն էլ մեղ սպասում են «վարի» բնակարանում, երբ նա զայլոյթով նորից ձեռք առաւ մուրճը եւ դղրդացրեց փողոցը...

Ճիշտ դրան տակից լսւեց կանացի մի կերկերուն ձայն։
— Քի՞մ տըր...

— Սաղըր սը՞ն, նէ՛ սըն, պէ՛...

— Քիմի՞ արիյորսինիզ...

— Պիսմիլլա՛հ, Ռահիմա՛ն, Ռահիմ...

— Էստէ քիմսէ եռք...

— Ալլա՛հ, Ալլա՛հ... Ո՛չ կափույու... Բահար աղա տըր։

Դուռը բացւեց։ Դոլոցի տարադով մի աղջիկ քարացած նայում էր ինձ։

— Ո՛ւր են տղանները, վրդովւած գոչեց Բահարը։
— Վարի տունն են...

Այժմ այնտեղ գնալու համար պէտք էր փողոցի անկիւնին հասնէինք եւ թաղի գլխաւոր փողոցով վար իջնէինք։ Բահարը մի քիչ մտածեց, ապա, յանկարծ, ձանձրոյթով գոչեց։

— Իւխարի, աշաղա պի՛ր տըր. Հասան կալըք։

Եւ Հասանը, շալակն առած, վեր տարաւ ինձ:

Տունը մարդ չկար, եւ աղջիկն էլ անհետացել էր: Նորից գլուխուում էի երկրորդ յարկի այն ընդարձակ ծովահայեաց դահլիճում, ուր շատ անդամներ էի եղել: Ամէն բան նախկին դրութեան մէջ էր. ե՛ւ մուտքի մօտ դրւած դաշնամուրը, ե՛ւ ձախ պատի տակ երկարած սետիրը իր գոլաւոր շատիկով, ծխախոտի կլոր սեղանները, պատին կախուծ նկարները: Գոյութեան ու կործանման հակասութիւնների մէջ զեռ դեգերում էին մտքերս, երբ վարից ձայներ լսեցի: Իրար յետեւից ներս մտան Պալըկձեան երկու ընտանիքների եօթն եղբայրները: Համազդային «գործից» յետ մնացածների ցաւ կար նրանց դէմքերին. «ապօրինի» գոյութեան մի թշւառութիւն...

Վարից լսեց կլմոն հանումի ձայնը, որ «վերի» Պալըկձեանների մօր մահից յետոյ երկու տների մօր հանգամանք ունէր: Հին բարեկամներ էինք. առիթը չէր փախցնում որ եւ է զւարթ պատմութիւն, դէպք լսելու ինձնից եւ երեխայի պէս երկար ու կուշտ ծիծաղում էր: Այժմ, ըստ երեւոյթին, սրտի հիւանդութիւնը, որից տառապում էր, բարգացել էր. թեւերի տակ մտած նրան բերում էին դեռատի քոյրը՝ Գոհարը եւ աղջիկը՝ նւարդը: Շէմքի մօտ կանգնած մնացին դպրոցի տարազով աղջիկը եւ Աննիկ ձինկէսզեանը: կլմոն հանումը մօտեցաւ ինձ իր սովորական ժպիտով: Բայց մէկ – երկու քայլ մընացած, յանկարծ, կանգ առաւ եւ լիաթոք չնչեց: Աթոռ տւին, նըստեց, թեք նայեց տղաներին ու դէմքը ավերի մէջ առած՝ անձայն հեկեկաց...

Շատ ուշ էր արդէն, երբ նոյն դահլիճում մնացի մենակ: Թաղում այժմ կար ընդամենը տասը – տասմէկ ընտանիք՝ Պօղոսեանները, Մուրատեանները, Գամբարեանները՝ «թրքացածների» հանգամանքով: Հայ Յեղ. Դաշնակցութեան Կ. Կոմիտէի բանտարկւած երեք ընկերների ընտանիքները: Նահատակ Թոփիալ – Համբարի ընտանիքը: Կասապեանների, Անձմեանների ընտանիքները, որոնց մուտքինները ճակատ էին ճամբռել զինուորական թժիշկների հանգամանքով: Եսայի Մուղալեանի ընտանիքը, որ դաղթի օրերին, մի գիշեր, մօրը, կնոջը, երեխաններին թունաւորելու ժամանակ չէր դիմացել փոքրիկ աղջկայ ճիշերից եւ երկրորդ յարկի պատուհանից վար նետելով իրեն պարտէղ՝ վշրել էր ուսուկը եւ գտնեում էր հիւանդանոցում: Մեր հարեւան Քրիստուրի ընտանիքը, որ թրքանալու շուրջ կնոջ հետ ունեցած տարածայնութեան հետեւանքով դանակով պատուել էր փոքր եւ այժմ նոյնպէս գտնեում էր հիւանդանոցում...



Դեռ լոյսը չբացւած հասնում էին ականջներիս ծովի մակընթացութեան խուլ շրմփոցները։ Եւ աղջամուղջի մէջ ստերանում էին վարը տարածւած կղմինտրի կտուրները։ Կիսախաւարի մէջ թմրող ծառերի վրա աղմուկով խմբում ու ցրւում էին ձնձղուկները։ Բայց չէին լսւում աքաղաղների սրտապատառ, փոխանցւող կանչերը, որոնցով յատկանչւում էր հայկական թաղի արշալոյսը։ Հորիզոնի տակ, բարակ շերտերով շառադունում էր երկինքը։ արեւի առաջապահած զիբքերը պարզում էին քիչ - քիչ։ Ծովի անծայր, հարթ տարածութիւնը փառում ու բարձրանում էր, հորիզոնի տակ ջրերը վար թափելու մի ձեւով։ Ու, յանկարծ, արնաներկ արեւի մի փշուր յայտնեց այնտեղ։ Այն եւ ձախ երկարեցին կաս - կարմիր շերտեր . . .

Սմենից շուտ արթնացել է Մարիամը. այսպէս է գովրոցի տարագով աղջկայ անունը, որը փոխադրւել էր վեցերորդ զասարանը ու նոր պիտի անցնէր մանչերի խառն զովրոցը։ Տասնեւիկց տարեկան է, բայց բոլորովին անտեղեակ իր բացառիկ գեղեցկութեան։ Մարիամը հայր չունի եւ մայրը վերջին պահուն նրան ասել է. «Դուն զնա Պալրկճեաններուն քով, ես ալ յունաց թաղը կը պահւեմ»։ Ու այսպէս երբ խօսում է, բոլորովին պզտիկ աղջկայ նման է Մարիամը։

Իսկ ապահով է արդեօք Մարիամի մօր տեղը.

— 0, ի հարկէ . . .

Եւ ինքն էլ զո՞հ է, որ մնացել է այստեղ.

— 0, շատ . . .

— Բայց պաղթից ի վեր Մարիամը այլեւս «սիրտ չունի», կեանքը արժէ քաղուրիկ է եղել նրա համար, որովհետեւ ամէն բան «տարմուտաղան» եղաւ . . .

Նրա օղնութեամբ բացւեցի։ Աղա Մարիամը մանրամասն հարցուփորձեց ինձ վարժուհիների, ուսուցիչների եւ մի քանի ընկերուհիների մասին, որոնց չկարողացայ յիշել . . .

Հազիւ սկսել էր այս նոր օրը, եւ Մեծ Օննիկը, որ կէս բժիշկ, կէս երաժիշտ էր, պարզում էր իր անելիքը, տան մէջ ինձ բուժելու համար, Երբ թթւած ներս մտաւ Բահար - աղան եւ յայտնեց, որ Մարբի բէյը պահանջում է ինձ հիւանդանոց փոխազրել։ Տղաները իրար երես նայեցին։ Բայց ասելիք չկար. հիւանդի տեղը հիւանդանոց էր. միայն թէ նորից ընկնում էի իշխանութեան անմիջական հսկողութեան տակ ու ոչ մի երաշխիք չկար, թէ վազն էլ մի ուրիշ տեղ չեն ճամբի ինձ։ Այդ էր, թերեւս, պատճառը, որ Միքայ - Հիւանդին թանը պէտք էր զացել զնալ մութեսարիֆի մօտ կարգադրութիւնը փոխել տալու համար . . .

Կէսօրին պարզւեց, որ կարգադրութիւնը մեկնում է մութեսարփեց: Իրիկւան դէմ, չորս պարսիկների հետ, եկաւ Բահար - աղան, որոնք ինձ դրին հիւանդանոցից բերած լաթէ մի պատգառակի վրա եւ ուսերին առնելով՝ դուրս տարան:

Տնից դէպի թաղի կենտրոնը, գլխաւոր փողոցի անկիւնից մի պահ տեսայ հոյակապ եկեղեցին, որի գմբէթին հաստատւած խաչը, զոյլութեան անխարտակելի կոթողի նման, գեռ պլազում էր վերջալոյսի շողերի մէջ: Ապա ծուեցինք դէպի վեր: Աջ, ձախ տները փակ ու լուռ են այնպէս, որ կարծես երբեք բնակչութիւն չէր եղել նրանց մէջ: Հէքիմեանների պատի տակ նստած էին երկու մուհաճիրներ, որոնցից մէկի ձեռքին հովանոց, միւսի գլխին եւրոպական գլխարկ կար. Անդրաշխարհային մի խաղաղութիւն էր տիրում թաղում, որ խանդարուում էր միայն Բահար - աղայի եւ պարսիկների համաչափ ոտնածայնով: Տուն, գուռ, պատուհան, ծառ, պարտէղ, ամէն բան հնութեան յատուկ արժէք էր ստացել: Հասանք Ալթունեանների տան շրջանը. մայթի վրա թափւած էին բգկտուած, գեղնած անհաշիւ թրդդիմքը. վերջալոյսի ճառագայթների տակ պսպղում էին փշրւած ապակիներ. պարտէղը տարաժամ աշնան տեսք ունէր: Աւելի վեր, նոյն տեսարանն էր ներկայացնում Խանէտանեանների տան շրջակայքը: Քստ երեւոյթին, առաջին հերթին ուշագրութիւն էին գրաւել ուսուցիչների բնակարանները: Փողոցը վերջացաւ, եւ, յանկարծ, առջեւո պարզւեց Թոռամանը...

Բահարը, վերելքից խուսափելով՝ բռնում էր դաշտի եղերքի արահետը: Այստեղ մէկ - երկու տների բակերը անջրպետւած են դաշտից ուեւացած, չորացած տախտակամածով, որի տակ միշտ չներ էին լինում: Սովորական զրօսանքների ժամանակ, հակառակ միշտ կրկնող ազդարարութիւններին, վարի գասարանների չարաձճիներս բոռնցքներով քայլերդ էին նւազում տախտակներին ու զրգուելով չներին՝ հաջոցին հաջոցով էին պատասխանում: Այժմ չներն էլ էին չքացել...

Քիչ վերը արդէն պարզւում են Թոռամանի ըլուրները, դաշտերը, անզամ հեռու ընկած կանաչազարդ կալւածքը, որի արօտներում արածող ոչխարիները տհարեկուում էին մարզանքի թմբուկների ձայներից: Ապա պարզւում է Թոռամանի լանջի տակ տարածւած հիւանդանոցի սպիտակ շնչքը, որ ուղիղ զծով նայում է հայկական թաղի կենտրոնին: Խոկ ծովից հիւանդանոցը առաջին շնչքն է, որ դրաւում է ամէն մի ճամբորդի ուշագրութիւնը: Որքան ժօտենում ենք, այնքան աւելի պարզ տեսնում եմ մի մարդ, որ կանգնած է մուտքի սիւ-

նազարդ առաջամասում . . . Աղիզ – աղան է, դաշտի մեր մարզանք-ների մշտական հանդիսականը, շատ տարիներ առաջ նույնչիլից ե-կած մի բարի ծերունի, որ ժամանակին Պլենայի տակ կոխւ էր մը-դել «Ակ – Փաշայի» դէմ եւ յետոյ հոգեւոր կոչում ստանալով՝ դաղ-թել էր Սամսոն: Բայց Աղիզ – աղան իր մուազինի հանգամանքով անգործութեան էր դատապարտւել եւ հարկադրւել էր հիւանդանո-ցի գոնապան դառնալ: Երկար տարիներ, հաւատարմութեամբ վա-րում էր այդ պաշտօնը, եւ թաղի ծայրամասերում կանայք նրան ճա-նաչում էին իրեւ մատչելի զներով «սուլֆաք-օ» ծախող:

— Սէլամ – ալէյքում, Աղիզ – աղա, գոչեց Բահարը:

— Սէլյէքում – սէլամ, ասաց նա, պիշ – պիշ նայելով ինձ:

* *

Երեք – չորս մետր լայնութեամբ եւ բաւական երկար ապակիա-պատ պատշգամ բում վար դրին: Պատշգամ մի ծայրին խմբած էին հիւանդներ: Աջ կողմից կային երեք – չորս սենեակներ, որոնցից մէ-կի առջեւ տեսայ Քրիստոսուրին, հիւանդի շապիկով: Ինձ մօտեցաւ մի քոյր, որ բաւական մաքուր հայերէնով մի քանի հարցումներ ա-րաւ ու մտաւ Քրիստոսուրի սենեակը: Լստ երեւոյթին, հայերէն գիտցող յոյն էր: Ապա մօտեցաւ դէր ու խրոխտ մի ուրիշը, յետոյ մանկահասակ մի երրորդը: Քիչ յետոյ վիրակապերս փոխւած, հիւ-անդանոցի շապիկ հազած, պառկած էր Քրիստոսուրի հետ միա-սին մի սենեակում: Երկու մահճակալ, դարակներ, մէկ աթոռ. մէկ հատ պատուհան, որ նայում էր զէպի թալ: Երեւի, գլխաւորը հա-յերէն խօսող քոյրն էր. նա էր փոխում վիրակապերս, որի ընթաց-քում ուր էլ դարձնում էր գլուխս, միշտ հանդիպում էր Քրիստոս-տուրի լարւած դէմքի այլաղան արտայայտութիւններին: Երբ քոյրը աւարտեց իր գործը եւ ուզում էր զնալ, Քրիստոսուրը ոտքի ելաւ եւ աղաչանքի շեշտով ասաց.

— Թանի, կը վախնամ վաղը վէրքս տեսնէ . . .

— Աղէ՛կ, աղէ՛կ, կը յիշեմ, բան մը կընեմ, մի՛ վախնար . . .

Հազիւ գուրս էր եկել քոյրը, երբ Քրիստոսուրը անհամբերու-թեամբ իրեն նետեց մահճակալիս մօտ ու երկար ժամանակ անյայ-տութեան մէջ տառապող բանտարկեալի պէս, սկսեց հարցուփորձել դաղթի, ծանապարհի, ծանօթների, հարեւանների, Գաւախում մնա-ցածների, թրքացածների մասին: Եւ հարցուփորձի ժամանակ, բա-ցականչութիւններով, ցասման, վշտի, յուսահատութեան չափազան-

ցւած արտայայտութիւններով տարօրինակ տպաւորութիւն էր թողնում : Արդէն այդ օրերին Թիւրքիայում խելքը գլխին հայ չկար : Բայց երբ սկսեց հարցուփորձել վիճակիս մասին , տարակուսանքի մէջ լնկայ . կարծես , մի քիչ ցնդել էր : Այսպէս , օրինակ , երբ իմացաւ , որ գլխիս ոսկորը ջարուել է , չչնջաց .

— Փա՛ռք Աստուծոյ , վա՛ռք Աստուծոյ . . .

Զարմացաւ , որ ոտքերս անվնաս են մնացել անկումից .

— Ի՞նչ կըսէք , ապա փաթթւած անանկ անկենդան կերերային . . .

— Արիւնաքամ են եղել :

— Բայց չէք կրնար քալել , անանկ չէ՞ . . .

— Ո՞չ . . .

— Է՛ս , վա՛ռք Աստուծոյ , վա՛ռք Աստուծոյ . . .

Նոր նկատեցի , որ Քրիստոսուրի աչքերը , ոսկրացած դէմքի վրա , կրակի պէս պլազում են եւ խօսելու ժամանակ չնչառութիւնը ընդհատում է : Արդէն գոհ պիտի լինէի , որ վերջ գտնէր այդ ձանձրակի հարցուփորձ : Բայց Քրիստոսուրը խորունկ վշտով ասաց .

— Երանի՛ , թէ ես ալ քեզ պէս ըլլայի , միւսիւ Վահան . . .

— Միթէ՞ աւելի վաս է վիճակդ :

— Վա՞տ , ցաւն ալ այն է , որ բան մըն ալ չունիմ , ասաց նա տաքութիւնից տառապողի պէս շրթունքները թրջելով .

— Վէրքս զոցւեր է , միւսիւ Վահան , զոցւե՛ր , զոչեց նա յուսահան . . .

— Որքան կուզես բորբոքէ , ճա՛ր չկայ . շունի միս է մարմինս , միւսիւ Վահան , շունի մի՛ս . . .

Բոլորովին շփոթւեցի . տարակոյս չկար , որ ցնդած էր .

— Քեզ պէս ըլլայի նէ , հարկաւ , ելք մը կը դանւէր . հիմա քանի մը օրէն կրնան դիս զուրս դրել հիւանդանոցէն , զաւակներուս հետ միասին աքսորել ու . . .

Քրիստոսուրի բորբոքւած աչքերը թացացան . ինչ որ անյարիր , արտասովոր ողբերգութիւն զգացի նրա մէջ .

— Ինքս ինձ «Խարակիրի» ըրի , որ մէկէն հոգիս աղատեմ ու զաւակներուս տառապանքն ու մահը չտեսնեմ . չեղա՛ւ , բախտս դարձաւ . նախ՝ ողջ մնացի , ապա՝ կինս արզուհալ տւաւ եւ մութեսարիքն ալ կարգադրեց , որ մինչեւ աղէկնալս մեր դաղթը յետաձգւի : Ատոր վրա խորհեցայ , թէ վէրքս առնւազն 5 - 6 ամիս կը տեւէ , է՛ս , անկէ ետքն ալ , ըսի , Աստուծ մեծ է , հալածանքները կը դադրին ու դուռ մը կը բացւի , հոս մեր գոյութիւնը քաշկոտելու : Հիմա կը տես-

նեմ, որ հալածանքները դադրելիք չունին. գալով վէրքիս վիճակին, ահա, նայէ . . .

Քրիստոսութիւնի փորին, գրեթէ ծայրից – ծայր, երկարում էր մի կիսակլոր սպի. միայն ձախ կողմին մնում էր հաղիւ նշմարելի չորսացած մի վէրք: Քրիստոսութիւն նկատելով հետաքրքրութիւնս՝ շարունակեց.

— Հոս իշնալէս երեք շաբաթ ետքը գոցւեցաւ. խորհեցայ, թէ ի՞նչ ընեմ: Մուղալեան էֆէնդին, որ վերը կը պառկի, կանչեցի. իւթէ կունը եկաւ: Կըսեմ, եսայի էֆէնդի, վէրքս գոցւեր է, ի՞նչ ընեմ: «Վայ, կըսէ, մուխտ չմարի, աս ե՞րբ գոցւեց»: Երկու օր է, կըսեմ: «Է, միակ ելքը ան է, կ'ըսէ, որ փորդ նորէն պատուէ»: Խորհեցայ, որ շիտակ կըսէ: է, աղէկ, ամմա հիւանդանոցին մէջ ինտո՞ր պիտի պատուեմ, կըսեմ: «Դուն հոգ մի ըներ, կըսէ, ես խնդիրը կը կարգադրեմ. Ֆանիին կը խնդրեմ, որ վէրքդ ծայրէն քիչիկ մը բանայ, ետքն ալ կը նայինք» . . .

Որքան պատմում, այնքան մի գող համակում էր նրան. ըստ երեւոյթին, ջերմ ունէր: Նա ոտքերը վեր քաշեց ու ծալլապատիկ նստելով մահճակալի ծայրին՝ շարունակեց.

— Առառն հիւանդանոցի րժիշկը եկաւ. «Հէյ հոգ մի ըներ, կըսէ, փորձանքը անցեր է, վէրքդ քանի մը օրէն կը գոցուի»: Զարհուրեցայ, միւսիւ վահան . . . Զգա՞ց արդիօք այդ սարսափս թէմալ պէյը՝ չգիտեմ: Բայց քիչ ետքը նորէն եկաւ ու կըսէ. «Է՛, օղում, վէրքը գոցւելէն ետքը շաբաթ մըն ալ անանկ կրնամ ձգձգել. միւսիր էֆէնդին միշտ կը հարցնէ վիճակիդ մասին. առելի երկարելու ճար չկայ. գուն ալ խորհէ ընելիքդ, որ ետքը պահանջի չդաս»: կըսէ . . .

Քրիստոսութիւն ծխախոտ փաթաթեց եւ միւս ափը մոխրամանի տեղ ծառայեցնելով՝ շարունակեց.

— Վաստ մարդ չէ, թէմալ պէյը, բայց ի՞նչ կրնայ ընել. ամէն բան միւտիրէն կախում ունի: Թէմալ պէյին շատոնց կը հանչնամ. ան չըլլար նէ, արդէն միւտիրը զիս հիւանդանոց չութիւն ընդունէր: Զերկարեմ. Մուղալեան էֆէնդիին տոմս մը զրեցի թէմալ պէյի ըստաներու, վիճակիս մասին եւ քոյլ ելիք միջոցով վեր ճամբեցի: Գիշերը, մէյ մըն ալ կը նայիմ, դանակը պարզած, ներս մտաւ իմ եւ անոր փրկարար հրեշտակը . . . Ֆանին, ան, որ վէրքդ փոխեց: Պառկեցուց, փորս նորէն պատուց ու կըսէ. «Է՞հ, չիմա վէրքդ մէկ ամիսէն չի գոցւեիր, ետքն ալ կը նայինք»: Աստւած թող կեանքդ երկար ընէ, կըսեմ: Երեք օր ետքը եկաւ թէմալ պէյը, բայց բան չըսաւ: Շաբաթը լրացաւ ու թէմալ պէյը տխուր, տրտում կըսէ. «Է՞հ,

օղլում, վաղը քեզ դուրս պիտի գրեմ հիւանդանոցէն»։ Բայ՝ աղէկ չեմ։ Զարմացաւ.

— «Վէրքդ չգոցւեց» . . .

— «Չգոցւեց» . . .

— «Բա'ց, բա'ց նայիմ» . . .

— Ի՞նչ կրնայի ընել, միւսիւ վահան, բացի. կը նայէ, կը դնէ, կարծես նոր կը տեսնէ։ Ետքը ինձ նայելով, լորձունքը կլեց ու կը-սէ. «Աս ի՞նչ ըրիր, օղլում, վէրքդ մեծցեր է»։ Ի՞նչ պիտի ընէի որ, բան մըն ալ ըրթի, կրսեմ նէ՛, լաֆին սիրտս վեր - վար կընէ։ Պիշ - պիշ կը նայի տչքերուս մէջ. ա'ն կը նայի, ե'ս կը նայիմ. ե'ս կը նա-յիմ, ան կը նայի. սիրտս փորս ինկաւ։ Մէյ մըն ալ, միւսիւ վահան, աչքին մէկը վրաս գոցեց ու կեցաւ . . . Ամժա՞ն, միւսիւ վահան, ի՞նչ ըսելս չգիտցայ . . . Բայց, յանկարծ, Քէմալ պէյը դարձաւ ու գլուխը կախ դուրս դնաց . . .

Քրիստոսառութը խոր չունչ առաւ, թեւով ճակատի քրտինքը սըր-րեց.

— Անցաւ երկու շարաթ։ Քէմալ պէյը կարծես ա'լ չէր նկատեր զիս։ Բայց անցեալ հինգչարթի հարցուց, թէ ինտո՞ր եմ։ Յատու-կէն հանդիսած ձեւ ասի ու ըսի՛ «Աստած կեանք տայ ձեզ, Քէմալ պէյ, արդէն ես միշտ մեծ յարզանք եմ տածած ձեր հանդէպ»։ Ի՞նչ կրնայի ըսել, քանի որ վէրքս նորէն գոցւեր է։ Հիմա վաղը գալու օրն է։ Երէկւընէ սկսած ֆանիին կը խնդրեմ, որ վէրքս նորէն քիչ մը բանայ։ Ասանկով կը խորհիմ դիւրութիւն ստեղծել Քէմալ պէ-յին համար, որպէսզի ան ալ հիմք ունենայ հոս մնալս երկարելու։ Բայց ֆանին ալ կը խոստանայ ու ոչինչ ըներ։ Ի՞նչ ընէ խեղճը, ե-րեւեր ան ալ կը վախնայ, թէ կը հասկցւի, ետքը գէշ կըլլայ . . .

Քրիստոսառութը ելաւ, մէկ - երկու անդամ դնաց, եկաւ սենեա-կում ու նորից մահճակալիս մօտ կանդ առաւ.

— Հիմա դուն ինձ խելք մը ցուցուր, միւսիւ վահան, հիւան-դանոցէն գուրս զրեն նէ, ի՞նչ ընեմ . . . Որքան կը խորհիմ, նորէն կուզամ այն մաքին, թէ միակ եւթը թրքանալն է։ Բայց դուն ալ կը-սիս, թէ թուրքացածներուն Գաւախէն ալ անդին կը քշեն։ Միթէ՞ անոնք ալ կը ջարդեն, միւսիւ վահան։

— Այո՛, ասրբերութիւն չկայ։

— Անանկ է նէ, ալ ինչո՞ւ թուրք դառնամ։

— Ի հարկէ . . .

Քրիստոսառութի հայեացքը պաղել էր վրաս.

— Իսկ եթէ թուրքանամ եւ արզուհալ տամ, որ զիս հոս պա-հե՞ն . . .

— Եթէ Սամսոնում ազգեցիկ թուրք պաշտպաններ դժոնես, դուցէ ...

— Ուչժիխն գործակատարը Ֆոււատ պէյը բարեկամս էր. ուրիշ ծանօթներ ալ կային, բայց ի՞նչ գիտնամ, կուզե՞ն հիմա զիս իրենց պաշտպանութեան տակ տոնել...

— Պէտք է փորձել նրանց միջնոցով միւտիրի վրա ազգելու, որ այժմ քեզ դուրս չանի հիւանդանոցից, մինչեւ կարելի լինի մի հաստատուն ելք դժոնել...

Քրիստոսուրը նորից կծկւեց մահճակալիս ծայրին ու մտքերի մէջ խրւեց: Բայց, յանկարծ, նրա գէմքը խիստ անբնական արտայայտութիւն ստացաւ ու խենթի պէս վրա տւեց.

— Միւտիրը անսիրտ մարդ է. պէտք է Քէմալ պէյին խնդրել, որ ուղղակի երթայ ու ըսէ ուր հարկն է, թէ ե՛ս, Քէմալ պէյս, որ աղէկ կը ճանչնամ Քրիստոսուր էֆէնդին, կը ինդրեմ անոր թուրքացնել եւ այսուհետեւ աղատ կացուցանել աքսորէ ու ամէն կարգի փորձութիւններէ... ի՞նչ կըսես:

Զպատասիանեցի: Քրիստոսուրը ելաւ ու երկարեց իր մահճակալին:

Ուշ էր: Հիւանդանոցի կեանքը վաղուց արդէն մեռել էր: Պատից կախւած ճրագի աղօտ լոյսի տակ տեսնում էի, որ Քրիստոսուրի շրթունքները շարժւում են: Ու մերթ ընդ մերթ ականջներիս հանում էին մրմունջներ: Քրիստոսուրը զառանցում էր... Յանկարծ, լոեցի.

— Դալո՞վ թուրքանալուս... Օ՛, թո՞ղ թուրքացնեն, թող տու՞ն անդամ թուրքացնեն, թող քսա՞ն, երեսո՞ւն...

Խոր զիշեր էր, երբ ստերի պէս ներս սահեց ֆանին: Քրիստոսուրը, որ կարծում էի, թէ վաղուց արդէն քնած է, ընդուստ վեր կացաւ:

— Պառկիր... շնչաց ֆանին:

Քրիստոսուրի գունատ գէմքին մի ժպիտ պարզեց: Ֆանին ձեռքով նշան արաւ: Քրիստոսուրը կապկի արագութեամբ քակեց ձեւի համար փորին փաթաթած վիրակապը եւ մահճակալին երկարեց: Ֆանին գրպանից հանեց մի դանակ, սրւակ, բամբակ ու զործի անցաւ. նա զգուշութեամբ պատում էր սպին, արիւնը խնամքով կասեցնում ու վար, վեր տանելով դանակը՝ ընդլայնում էր բացած վէրքը: Աւարտեց եւ ինչպէս անշշուկ եկել էր, այնպէս էլ զնաց:

Քրիստոսուրը այժմ ծանր հիւանդի պէս տնքում էր...

Բելգրադ

(Չարունակելի)